Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
օգոստոսի 31-ի նիստի N 37
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Երկրագնդի գոյության ընթացքում նրա աշխարհագրական թաղանթի հետ միասին փոխվել է նաև կլիման: Կլիմայի փոփոխության բնական գործոններ են հանդիսանում ավելի մեծ հաճախականությամբ կրկնվող հիդրոօդերևութաբանական մի շարք երևույթներ, այդ թվում՝ նաև կարկտահարությունը: Վերջինս կարող է որոշակիորեն վնասազերծվել մարդու նպատակային գործունեության արդյունքում, սակայն դրա համար պահանջվում են մեծածավալ կապիտալ ներդրումներ:

2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությանը մեծ վնաս են հասցնում հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթները (երաշտ, խորշակ, կարկտահարություն, ցրտահարություն), որոնց հաճախականությունը և տևողությունը վերջին տասնամյակներում կլիմայի փոփոխության հետ կապված աճման միտում ունի: Վերջին տարիներին երաշտից, կարկուտից, հեղեղումներից, գարնանային ցրտահարություններից և սելավներից գյուղատնտեսությանը հասցված ամենամյա վնասը գնահատվում է շուրջ 15-30 մլրդ դրամ: Ընդ որում վնասի մեծ մասը բաժին է ընկնում կարկտահարությանը: Կլիմայի փոփոխության սցենարների համաձայն, հնարավոր է գարնանը և ամռանը աճի ամպրոպների և կարկտի ուղեկցությամբ անկայուն եղանակների հաճախականությունը:

3. Աշխարհի տարբեր երկրներում կիրառվում են կարկուտի դեմ ակտիվ ներգործության տարբեր եղանակներ, մասնավորապես այդ երևույթի դեմ պայքարի համար կիրառվում են հրետանային, գազագեներատորային, հրթիռային, ինքնաթիռային, գեներատորային, էլեկտրաֆիզիկական մեթոդները: Կարկուտի դեմ ակտիվ ներգործության մեթոդների հետ մեկտեղ գյուղատնտեսական մշակաբույսերը կարկուտից պաշտպանում են նաև պոլիմերային հիմք ունեցող ցանցերով, որը

համարվում է հակակարկտային պաշտպանության պասիվ եղանակ և կիրառվում է բազմաթիվ երկրներում: ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 15 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգը», որով այլ մեթոդների հետ միասին նախանշվում է նաև հակակարկտային ցանցերի կիրառման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Վերջինիս իրականացման նպատակով անհրաժեշտություն է Հայաստանի Հանրապետության գյու-ղատնտեսությունում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրագործումը:

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

4. Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման առումով, բնատնտեսական և այլ առանձնահատկություններով պայմանավորված, ոլորտը հանդի-սանում է բարձր ռիսկային: Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպվում է ընդարձակ տարածքների վրա, բազմաբնույթ ուղղություններով, որը լրացուցիչ ծախսեր և ջանքեր է պահանջում բնակլիմայական աղետների կառավարման համար:

5. Գյուղատնտեսության ոլորտի ռիսկերի մեղմման գործընթացում կարևորվում է ռազմավարական մեծ նշանակություն ունեցող կարկտահարության դեմ պայքարը, հաշվի առնելով նաև այն փաստը, որ մթնոլորտային վտանգավոր երևույթներից տնտեսությանը ամենամեծ վնասը հասցնում է կարկտահարությունը: Հետևապես, անհրաժեշտ է շեշտակի զարգացնել տվյալ ուղղությունը, մասնավորապես՝ ընդլայնել պաշտպանվող տարածքները, բարձրացնել հակակարկտային ներգործության արդյունավետությունը, փորձարկել ու ներդնել հակակարկտային պաշտպանության նոր միջոցներ:

6. Հակակարկտային ծառայությունը հանրապետությունում ստեղծվել է 1964 թվականին: 1980-ական թվականներին այն ընդգրկում էր 11 հակակարկտային ռազմականացված կենտրոն՝ 60 հրթիռահրետանային մարտկոցներով: Հանրապետու-թյան 15 վարչատարածքային շրջանների ավելի քան 1,0 մլն հեկտար ընդհանուր տարածքի վրա տարվում էին կարկուտի դեմ պայքարի աշխատանքներ: 1992 թվականից հակակարկտային պաշտպանության աշխատանքները դադարեցվել են՝ ֆինանսական

հատկացումների բացակայության պատճառով:

7. Հաշվի առնելով հակակարկտային աշխատանքների խիստ կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 3-ի N 467-Ն որոշմամբ ստեղծվել է «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը վերակազմակերպվել է «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության, որի կառավարման լիազորությունները վերապահվել են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը:

8. 2014 թվականի սկզբին գործում էին երկու ռադիոլոկացիոն կայան և 154 հակակարկտային կայանք, որից 145-ը ռադիոմոդեմային, իսկ 9-ը՝ շարժական՝ առանձնացված ՎՊՆ-ՎԼԱՆ (VPN-VLAN) կապուղիով: 2014 թվականին տեղադրվեցին թվով 80 «Զենիթ» տիպի ԳՍՄ-ՍՄՍ (GSM-SMS) կարճ հաղորդագրությունների միջոցով կառավարվող հակակարկտային կայանքներ, որոնք տեղադրվեցին Արագածոտնի (7 կայանք), Արմավիրի (50 կայանք), Արարատի (18 կայանք) և Լոռու (5 կայանք) մարզերում: Միասնական կառավարման համակարգի լիարժեք գործունեությունն ապահովելու նպատակով ստեղծվեց Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքներում տեղակայված հակակարկտային կայանքների միասնական կառավարման համակարգ, որով 2014-2015 թթ. ընթացքում միասնական կառավարման վերցվեցին վերոնշյալ կայանքները, որի արդյունքում զգալիորեն բարձրացավ հակակարկտային ներգործության աշխատանքների արդյունավետությունը:

9. 2015 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում հակակարկտային ներգործության աշխատանքներն իրականացվել են 2 ռադիոտեղորոշիչով և 435 հակակարկտային կայանքով, իսկ 2016 թվականին՝ թվով 496 կայանքի միջոցով: Ներկայումս հակակարկտային կայանքներով պաշտպանված է Հայաստանի Հանրապետության մշակվող տարածքների շուրջ 8 %-ը:

10. Մինչև 1992 թվականը հակակարկտային պաշտպանության աշխատանքների արդյունավետությունը կազմել է 94 %, իսկ ստացված եկամուտները գերազանցել են ծախսերն ավելի քան 5 անգամ: Համաձայն Արագածոտնի և Լոռու ռադիոլոկացիոն հակակարկտային կայանների 2015 թվականի տվյալների, կարկտահարության դեպքերի ընդհանուր թիվը չպաշտպանվող տարածքներում կազմել է 111, իսկ պաշտպանվող

տարածքներում՝ 9, իսկ Արագածոտնի և Արմավիրի մարզերի 16 գյուղերում տեղակայված 30 հակակարկտային գազագեներատորային կայանքների ռադիոմոդեմային հեռակառավարման մեթոդով պաշտպանության տակ վերցված շուրջ 2500 հեկտար գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանության ֆիզիկական արդյունավետությունը 2009 թվականի տվյալներով կազմել է 55-75 %:

11. Ներկայումս նպատակահարմար է համարվում հրթիռային եղանակի ներդրումը, ինչի դեպքում անհրաժեշտ է ՀՀ տարածքում կամայականորեն տեղակայված գազագենե-ռատորային հակակարկտային կայանքները վերազինել և տեղակայել սահմանամերձ գոտիներում, ինչը կկանխարգելի հանրապետության տարածք ներթափանցող մթնոլորտային ճակատային գործընթացների հետագա զարգացումը: Արդյունքում, կնվազի լրացուցիչ գազագեներատորային հակակարկտային կայանքների ձեռքբերման անհրաժեշտությունը, իսկ սահմանամերձ գոտիներում պաշտպանության տակ կվերցվի ավելի մեծ տարածք, ինչը թույլ կտա զգալիորեն նվազեցնել կարկտահարության հետևանքով գյուղատնտեսությանը պատճառվող վնասը:

12. Գյուղատնտեսության ապահովագրական համակարգի բացակայության պայմաններում, կարկտահարությունների դեպքում, երաշխավորված բերքի ու տնտեսավարողների եկամուտների ապահովման համար հուսալի միջոց է հատկապես խաղողի և պտղատու այգիներում կարկտապաշտպան ցանցաշերտերի տեխնոլոգիաների ներդրումը: Ներկայումս հանրապետության շուրջ 60-70 հեկտար տարածքներում տեղադրվել են կարկտապաշտպան ցանցեր, որոնց կիրառման արդյունավետությունը կազմում է գրեթե 100 %: 2013 թվականին <<Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն>> հիմնադրամի (CARD) <<Շուկաներ Մեղրիի համար>> ծրագրի, <<Միացյալ ազգերի զարգացման ծրագրի>> (UNDP) և <<Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմի>> համատեղ ջանքերով նմանատիպ փորձարկում է իրականացվել Մեղրիի տարածաշրջանի Ալվանք համայնքում, որտեղ ցանցապատվել է 400 մ2 խաղողի լարային այգի: <<Միացյալ ազգերի զարգացման ծրագրի>> <<Աղետների ռիսկերի նվազեցման ծրագրով>> Տավուշի մարզի Տավուշ համայնքում կատարվել է 0.45 հա խաղողի այգու ցանցապատում: Վերջին երեք տարիներին այն ապահովել է բարձր արդյունքներ:

13. Գյուղատնտեսության ոլորտում հակակարկտային ցանցերի առավելությունների ներկայացմանը, ներդրման խոչընդոտների գնահատմանն ու դրանց մեղմանը, միջոցառումների ձեռնարկմանն է ուղղված տվյալ ծրագիրը:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

14. Տարբեր բնական աղետների, այդ թվում կարկտահարության և անկանխատեսելի պատահարների հետևանքով զգալի կորուստներ են կրում հանրապետության գյուղատնտեսությունում տնտեսավարողները:

15. Յուրաքանչյուր տարի կարկուտի պատճառով վնասվում են հանրապետության այգետարածքների 10-15 %, որոշ դեպքերում կարկտահարված տարածքներում բերքի կորուստը կազմում է 80-100 %: Կարկտահարությունից վնասված բերքը կորցնում է ապրանքային տեսքը, որի պատճառով դժվարանում է դրա իրացումը, զգալիորեն նվազում է տնտեսավարողների եկամուտները: Ուժեղ կարկտահարված այգիների վերականգնման համար պահանջվում է առնվազն մեկ տարի և լրացուցիչ ֆինանսական ներդրումներ՝ այգիներում լրացուցիչ էտի, պարարտացման և ագրոտեխնիկական այլ միջոցառումների իրականացման համար:

16. 2013 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում մայիսի 12-ին և 17-ին տեղացած կարկտահարության հետևանքով 12817 հողօգտագործողների մոտ վնասվել են 11090 հա գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններ, պտղատու և խաղողի այգիներ: Հասցված վնասը գնահատվել է շուրջ 25.3 մլրդ դրամ:

17. 2014 թվականին օպերատիվ տվյալներով, Հայաստանի Հանրապետության 6 մարզում (Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Վայոց Ձորի և Տավուշի) ցրտահարության հետևանքով վնասվել են 287 համայնքների 31716 տնտեսության պատկանող 9185 հա պտղատու և խաղողի այգիներ: Հասցված վնասը կազմել է շուրջ 11 մլրդ 181 մլն դրամ: Լոռու և Շիրակի մարզերում տեղացած կարկտահարության հետևանքով վնասվել են Լոռու մարզում 15 և Շիրակի մարզում՝ 37 համայնքների 15101 հա գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններ: Հասցված վնասը գնահատվել է շուրջ 6.7 մլրդ դրամ: Ընդամենը 2014 թվականին բնական աղետների (ցրտահարություն և կարկուտ) հետևանքով պատճառած վնասը գնահատվում է շուրջ 17.9 մլրդ դրամ:

18. 2015 թվականին կարկտահարության հետևանքով վնասվել են հանրապետության 8 մարզի 82 համայնքի (որոշ համայնքներ կարկտահարվել են 2-ից 3 անգամ) գյուղատնտեսական մշակաբույսերի շուրջ 8.8 հազար հա ցանքատարածություններ, բերքի կորուստը կազմել է շուրջ 57.5 հազար տոննա, վնասը՝ շուրջ 7.8 մլրդ դրամ:

19. 2016 թվականին կարկտահարության հետևանքով վնասվել են հանրապետության 9 մարզի 150 համայնքի (որոշ համայնքներ կարկտահարվել են 2-ից 3 անգամ) գյուղատնտեսական մշակաբույսերի շուրջ 23.1 հազար հա մշակվող տարածություններ, բերքի կորուստը կազմել է շուրջ 278.6 հազար տոննա, վնասը՝ շուրջ 33.6 մլրդ դրամ:

20. Հակակակարկտային ակտիվ ներգործության մեթոդների հետ միասին կարևորվում է հակակարկտային ցանցերի կիրառումը, որի համար պահանջվում է մատչելի մեխանիզմներով դրանց ներդրում և օգտագործում:

III.ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

21. Ծրագրի հիմնական նպատակը՝ մատչելի պայմաններով, մասնավորապես՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից կարկտապաշտպան ցանցերի ներդրումն է, արդյունքում՝ պտղատու և խաղողի այգիների կարկուտից արդյունավետ պաշտպանությունը, տնտեսավարողների եկամուտների պահպանումն ու այգեգործության արդյունավետության բարձրացումը:

22. Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

1) կարկտապաշտպան ցանցերի ներդրման խոչընդոտների գնահատումը և դրանց մեղմման հնարավորությունների օգտագործումը.

2) գյուղատնտեսությունում հակակարկտային ցանցերի ներդրման համար մատչելի վարկավորման մեխանիզմների առաջադրումը.

3) հանրապետությունում ներդրվող հակակարկտային ցանցերի տեսակների հստակեցումը.

4) հակակարկտային ցանցերի համար պահանջվող վարկային ներդրումների և դրա սուբսիդավորվող մասի գնահատումը.

5) կարկտապաշտպան ցանցերի ներդրման գործընթացում վարկերի սուբսիդավորման ձևի հստակեցումը.

6) ծրագրի մոնիթորինգի իրականացման մեխանիզմի առաջադրումը.

7) ծրագրի ռիսկերի գնահատումը:

IV.ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

23. Համեմատելով Հայաստանում այգեգործության վարման մակարդակը աշխարհում այս ոլորտում ընթացող զարգացումների, կիրառվող մեթոդների և տեխնոլոգիաների հետ, համոզվում ենք, որ ընդհանուր առմամբ հանրապետությունում այգու մշակության տեխնոլոգիաները չեն բավարարում արդի պահանջները: 2016 թվականին Հայաստանի Հանրապետությունում խաղողի այգիների տարածքները կազմել են 17.1, պտղատու այգիներինը՝ 40.5 հազար հեկտար, համախառն արտադրանքը համապատասխանաբար՝ 178.7 և 242.6 հազ. տոննա: Ցանցերի միջոցով հակակարկտային պաշտպանություն ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվում է պիլոտային ծրագրերի տեսքով, և հակակարկտային ցանցերի մասսայական կիրառում դեռևս չի իրականացվում: Ստեղծված իրավիճակում անհրաժեշտություն է առաջացել պետական նպատակային քաղաքականության կիրառմամբ հանրապետությունում խթանել պտղատու և խաղողի այգիներում կարկտապաշտպան ցանցային համակարգերի ներդրումը, ընդ որում, հանրապետության այն գոտիները, որոնք հնարավոր չի լինի պաշտպանել մթնոլորտային վտանգավոր երևույթների վրա ակտիվ ներգործության համար նախատեսված տեխնիկական միջոցներով, պետք է պաշտպանված լինեն կարկտապաշտպան ցանցային համակարգերով: Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում պարզվել է, որ կարկտապաշտպան ցանցային համակարգերի ներդրմանը խոչընդոտող գործոններն են՝

1) կարկտապաշտպան միջոցների բարձր գինը.

2) պտղաբուծությամբ և խաղողագործությամբ զբաղվող տնտեսավարողների մոտ կարկտապաշտպան միջոցների ներդրման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը.

3) վարկերի դժվարամատչելիությունը (կարճաժամկետ և բարձր տոկոսադրույքներ).

4) գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողների մոտ համակարգի վերաբերյալ իրազեկվածության պակասը.

5) տեղական արտադրության բացակայությունը:

24. Կարկտապաշտպան ցանցային համակարգերի ներդրման խոչընդոտների մեղմման նպատակով առաջարկվում է.

1) մշակել նպատակային երկարաժամկետ, մատչելի (ցածր տոկոսադրույքներով և երկարաժամկետ) վարկավորման մեխանիզմներ՝ կարկտապաշտպան ցանցային միջոցների ներդրման համար.

2) բարձրացնել տնտեսավարողների իրազեկվածությունը, կարկտապաշտպան ցանցային միջոցներ ներդրված այգիներում կազմակերպել ցուցադրական ուսուցումներ.

3) տարբեր մեխանիզմներով (նպատակային մատչելի վարկեր, դրամաշնորհներ, ծախսերի մասնակի սուբսիդավորում, տեխնոլոգիաների իրազեկում) աջակցել կարկտապաշտպան ցանցաշերտերի տեղական արտադրության կազմակերպմանը:

25. Կարկտապաշտպան ցանցերը, որոնք գրեթե 100 %-ով պաշտպանում են կարկտահարության բացասական ազդեցություններից, պաշտպանում են պտղատու ծառերն ու խաղողի վազերը քամիների բացասական ազդեցություններից, թռչունների և խոշոր միջատների վնասներից ծաղկման շրջանում: Կարկտապաշտպան ցանցերով այգիների պաշտպանության առավելությունները հետևյալն են՝

1) այգու միջոցների (ծառերի, վազերի) և ներդրումների պաշտպանութուն,

2) կայուն բերքի ստացման ապահովում՝ բերքին վնաս հասցնող ռիսկերի նվազեցում,

3) բարձրորակ բերքի ապահովում,

4) կարկտահարվող տարիներին եկամուտների աճի արձանագրում,

5) խոշոր միջատներից և թռչուններից հասցվող վնասների նվազում,

6) քամուց և արևից հասցված վնասների նվազեցում,

7) բարենպաստ ազդեցություն բույսերի լուսավորության ռեժիմի վրա,

8) հակակարկտային ծառայությունների աշխատանքից և այգիների ապահովագրումից անկախություն:

26. Կարկտապաշտպան ցանցերը լինում են տարբեր տեսակի, չափի, խտության և նշանակության: Կարող են կիրառվել ինչպես ամբողջական մակերեսների, այնպես էլ առանձին շարքերի և նույնիսկ առանձին բույսերի պաշտպանության համար: Կախված մշակաբույսերի առանձնահատկություններից և տեղանքից կարող են կիրառվել հակակարկտային ցանցերի վրանաձև, հարթ, ճկուն, ուղղահայաց և այլ կառուցվածքներ: Վերջին տարիներին խաղողի այգիներում լայն տարածում է գտել կարկտապաշտպան ցանցերի ուղղահայաց դիրքով կիրառումը, որը ենթադրում է ավելի երկար շահագործում, դյուրին տեղադրում և արդյունավետ պաշտպանություն:

27. Ծառերի, վազերի կամ ամբողջական շարքերի ծածկումը կարկտապաշտպան մանրացանցով հնարավոր է դարձնում այգու և բերքի պաշտպանությունը ցանկացած կարկտահարման ազդեցությունից: Պաշտպանական ցանցերի համակարգն ամրացվում է թզուկային այգիների լարայունային համակարգի վրա կամ առանձին սյուների միջոցով: Դրանով հնարավոր է լինում ամբողջովին ծածկել ծառերի և վազերի առավել զգայուն զանգվածը՝ սաղարթի շիվերը, ճյուղերը, պտղաբերող օրգանները, տերևները, ծաղիկները, պտուղները:

28. Հակակարկտային ցանցերը կարելի է օգտագործել երկար ժամանակ, չնայած այն հանգամանքին, որ հակակարկտային ցանցերի համար գործարանային երաշխիքը տրվում է 10 տարվա համար, գործնականում որակյալ ցանցերը կարելի է կիրառել մինչև 15 տարի:

29. Կարկտապաշտպան ցանցերի համար ներդրվող գումարը միանգամայն արդարացված է և համարվում է որակյալ բերքի ստացման կայուն երաշխիք: Խաղողի հակակարկտային ցանցերի համար կատարված հաշվարկային գնահատականները ցույց են տալիս, որ կարկտահարությունից տարեկան բերքի 45 % կորստի դեպքում վնասի չափը ծրագրի իրականացման ժամանակահատվածում (7 տարի) ավելի քան 2.6 անգամ գերազանցում է հակակարկատային ցանցի ձեռք բերման և տեղադրման ծախսերը, իսկ բերքի 30 % կորստի դեպքում վնասի չափը շուրջ 75.0 %-ով գերազանցում է հակակարկտային ցանցի ձեռք բերման և տեղադրման ծախսերը:

30. Հանրապետության գյուղատնտեսությունում հակակարկտային ցանցերի կիրառման առավելությունների, դրանց կիրառման ներկայիս վիճակի գնահատումը ցույց է տալիս, որ առաջնահերթ խնդիր է հակակարկտային ցանցերի ներդրման նպատակային ծրագրերի մշակումը և դրա իրականացումը, խնդրի վերաբերյալ նոր մոտեցումների և մեխանիզմների կիրառմամբ պետական աջակցության քաղաքականության իրականացումը:

31. Ծրագրով նախատեսվում է գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար առաջարկել հակակարկտային ցանցերի ձեռքբերման և ներդրման հնարավորինս մատչելի և արդյունավետ մոտեցումներ:

32. Ծրագիրը կիրագործվի հետևյալ հիմնական մոտեցումների կիրառմամբ.

1) Ծրագրով գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվելիք հակակարկտային ցանցերը կմատակարարվի նման արտադրատեսակներ արտադրող տարբեր ընկերություններից, հաշվի առնելով հումքի տեսակը, ցանցերի նպատակային

նշանակությունը՝ խաղողի այգիների պաշտպանության, թե պտղատու այգիների պաշտպանության համար, խարսխասյուների տեսակը և այլն: Վերջինս հնարավորություն կտա նաև գնահատել հանրապետությունում հակակարկտային ցանցերի տեղական արտադրության հնարավորությունները և նախաձեռնել դրանց ամբողջական, կամ մի շարք դետալների արտադրության կազմակերպումը.

2) ծրագրի շրջանակներում հակակարկտային ցանցերի մատակարարումը Հայաստանի Հանրապետություն պետք է իրականացվի մասնագիտացված տնտեսավարողների կողմից, որոնք կիրականացնեն այդ տեխնոլոգիաների ներդրման (մոնտաժման) աշխատանքները, գյուղատնտեսությունում տնտեսավարողներին (շահառուներին) կմատուցեն խորհրդատվություն՝ հակակարկտային ցանցերի օգտագործման և սպասարկման ուղղությամբ, կիրականացնեն հակակարկտային ցանցերի երաշխիքային սպասարկում՝ երկու տարի ժամկետով.

3) ծրագրով 2018 թվականից սկսած մասնակի կսուբսիդավորվի հակակարկտային ցանցեր ձեռք բերող և ներդրող, վարկային պայմանագիր կնքած տնտեսավարողների վարկի տոկոսադրույքը՝ պայմանագրի գործողության ընթացքում՝ ծրագրի շրջանակներում կնքված վարկային պայմանագրերի շրջանակներում.

4) ծրագրով վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման համար 2018 թվականին պահանջվում է 700.6 մլն դրամ, իսկ ծրագրի իրականացման հետագա 2019-2024 թվականներին ֆինանսավորումը կիրականացվի յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում բյուջետային հայտերի հիման վրա տվյալ տարվա համար անհրաժեշտ չափով գումար հատկացնելու միջոցով.

5) գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողների ներկայիս ցածր վճարունակությունը հանգեցնում է նոր տեխնոլոգիաներ ձեռք բերելու ցածր վճարունակ պահանջարկի: Նշված գումարով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը հնարավորություն կտա տարեկան սուբսիդավորել 1350 հա, այդ թվում՝ 1000 հա խաղողի և 350 հա պտղատու այգիների հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրված վարկերի տոկոսադրույքը: Սուբսիդավորման համար նախատեսված խաղողի և պտղատու այգիների չափերը պահանջարկով պայմանավորված կարող են փոփոխվել՝ սուբսիդավորման համար սահմանված գումարի սահմաններում:

6) հակակարկտային ցանցերի ներդրման վարկավորման պետական աջակցության ծրագրի շրջանակներում տնտեսավարողներին տրամադրվող միջոցները, աշխատանքները և ծառայությունները կներառեն.

ա. խաղողի այգիների հակակարկտային ցանցերը, ներառյալ ցանցը, կոնստրուկտիվ մասերը (այուները), ցինկապատ լարերը, կապիչները, մոնտաժման աշխատանքները և շահագործման վերաբերյալ խորհրդատվությունը և երաշխիքային սպասարկումը,

բ. պտղատու այգիների հակակարկտային ցանցերը, ներառյալ ցանցը, կոնստրուկտիվ մասերը (այուները), ցինկապատ լարերը, կապիչները, մոնտաժման աշխատանքները և շահագործման վերաբերյալ խորհրդատվությունը և երաշխիքային սպասարկումը,

7) հակակարկտային ցանցերի ներդրման պետական աջակցության (վարկավորման) պայմաններն են.

ա. խաղողի այգիների հակակարկտային ցանցերի համար՝ վարկերի տրամադրում հայկական դրամով, 7 տարի մարման ժամկետով, վարկի տարեկան մինչև 14 % տոկոսադրույքով, վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկը տնտեսավարողին տրամադրվի 2 % տոկոսադրույքով,

բ. պտղատու այգիների հակակարկտային ցանցերի համար՝ վարկերի տրամադրում հայկական դրամով, 7 տարի մարման ժամկետով, վարկի տարեկան մինչև 14 % տոկոսադրույքով, վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկը տնտեսավարողին տրամադրվի 2 % տոկոսադրույքով:

8) ծրագրի մասնակիցներն են.

ա. հակակարկտային ցանցերի ձեռք բերման համար սույն ծրագրի պայմաններին համապատասխան վարկային պայմանագիր կնքած գյուղատնտեսությունում տնտեսա-վարողները (ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում գյուղատնտեսական կոոպերատիվները, անհատ ձեռնարկատերերը), որոնք բավարարում են ծրագրին մասնակից բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական (վարկունակության) պահանջները: Ծրագրի շրջանակներում նույն վարկառուի կողմից ձեռք բերվող վարկավորման գումարը չպետք է գերազանցի 100 մլն դրամը,

բ. ցանկացած բանկ և վարկային կազմակերպություն, որը սույն ծրագրի պայմաններին համապատասխան վարկ է տրամադրում հակակարկտային ցանցերի ձեռք բերման համար: Ծրագրի մասնակից կարող են դառնալ այն բանկերը և վարկային կազմակերպությունները, որոնք բավարարում են ծրագրի պահանջները: Առաջնությունը

կտրվի վարկի առավել ցածր տարեկան տոկոսադրույք առաջարկող բանկերին և վարկային կազմակերպություններին,

գ. հակակարկտային ցանցեր մատակարարող իրավաբանական և ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերերը,

դ. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցը (ԳՖԿ),

ե. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը,

9) հակակարկտային ցանցերի ձեռք բերման վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գործընթացը.

ա. հակակարկտային ցանցերի ձեռք բերման վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման գործընթացը նախաձեռնում են բանկերը և վարկային կազմակերպությունները, որոնք սույն ծրագրի պայմաններին համապատասխան տրամադրում են վարկեր,

բ. վարկի մարման գործընթացը իրականացվում է ըստ ամիսների՝ մայր գումարի հավասարաչափ վճարման եղանակով, վարկի տոկոսադրույքը հաշվարկվում է մայր գումարի մնացորդի հաշվով,

գ. վարկառուի կողմից վարկի մայր գումարի ժամկետից շուտ կատարված մարումների համար բանկի և վարկային կազմակերպության կողմից տույժ և տուգանք չի հաշվարկվում ու չի գանձվում,

դ. 2018 թվականի համար վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման համար նախատեսված 700.6 մլն դրամ գումարը եռամսյակային պարբերականությամբ փոխանցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի հատուկ հաշվին՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցներից: Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցին իրավունք է վերապահվում փոխանցված գումարը որպես ավանդ ձևակերպելու բանկում և ստացվող դեպոզիտային տոկոսն ուղղելու ծրագրի իրականացման հետ կապված հետևյալ

աշխատանքներին՝ ծրագրի լուսաբանում, մոնիթորինգի իրականացում, վեճերի լուծմանն ուղղված դատական ծախսեր, ծրագրի իրականացման հետ կապված այլ գործառնական ծախսեր,.

ե. վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը իրականացվում է վարկի մայր գումարի և վարկի տոկոսադրույքի չսուբսիդավորվող մասի փաստացի մարումների հիման վրա,

զ. վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից փոխանցվում է բանկի կամ վարկային կազմակերպության համապատասխան հաշվին՝ տվյալ ֆինանսական կազմակերպության հայտերի հիման վրա: Հայտի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի և տվյալ ֆինանսական կազմակերպության միջև կնքվող պայմանագրով,

է. բանկը կամ վարկային կազմակերպությունը վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման հայտը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցին է ներկայացնում ամիսը մեկ անգամ՝ ոչ ուշ, քան հաջորդ ամսվա հինգերորդ աշխատանքային օրը: Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցը պարտավոր է հայտն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում բավարարել հայտը և վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը փոխանցել համապատասխան բանկի կամ վարկային կազմակերպության հաշվի համարին՝ եթե հայտը բավարարում է Ծրագրի պահանջներին,

10) հակակարկտային ցանցերի ձեռք բերման համար տրամադրված վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման դադարեցումը.

ա. վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը դադարեցվում է, եթե առկա են տվյալ վարկի մասով վարկառուի մեկ տարվա (նախորդ 12 ամիսներ) կտրվածքով

հանրագումարային վաթսուն օրվանից ավել ժամկետանց պարտավորություններ վարկատուի հանդեպ կամ վարկատուի հանդեպ ունեցած ժամկետանց պարտավորությունների հետևանքով՝ համաձայն 23.04.1999թ-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից հավանություն տրված և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»,

բ. վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը դադարեցվում է, երբ չի պահպանվում սահմանված պահանջները, կամ չի պահպանվել վարկի տրամադրման պայմանները,

գ. վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը դադարեցվում է այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցը մոնիթորինգի արդյունքում հայտնաբերում է սույն ծրագրի պայմանների խախտում:

V. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

33. Ծրագրի մոնիթորինգն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցը՝ բանկերի և վարկային կազմակերպությունների հայտերի վերլուծության և վարկառուների ընտրանքային ստուգումների հիման վրա:

34. Հակակարկտային ցանցերի ձեռք բերման վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման հայտերի ամփոփման արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցը ձևավորում է վիճակագրական տվյալների բազա, որը ներառում է տոկոսադրույքի սուբսիդավորվող վարկերի մասին՝ ծրագրի իրականացման հետ կապված տեղեկատվությունը, արձանագրված խնդիրները և իրագործման դժվարությունները:

35. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցը վարկառուների ընտրանքային ստուգումներ կարող է իրականացնել ծրագրի պայմաններին համապատասխանությունն ստուգելու նպատակով:

36. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցը պարտավոր է առնվազն 30 օրը մեկ անգամ հաշվետվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

37. Հաշվետվությունը պետք է պարունակի մանրամասն տեղեկատվություն ծրագրի ընթացքի մասին, այդ թվում՝

1) վարկային պայմանագրերի մասին տեղեկատվություն՝ ըստ մարզերի համայնքների շահառուները, հակակարկտային ցանցերի մակերեսը, տեսակը, արտադրող երկիրը, գումարը, վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը՝ ըստ կոնկրետ ցանցերի տեսակի.

2) տեղեկատվություն մոնիթորինգի արդյունքների մասին.

3) հայտնաբերված խախտումների մասին տեղեկատվություն.

4) առաջարկություններ ծրագրի պայմանների բարելավման կամ կատարելագործման վերաբերյալ և այլն:

VI. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

38. Հայաստանի Հանրապետությունում հակակարկտային ցանցերի համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման գործընթացի կազմակերպումը կապված է մի շարք ռիսկերի հետ: Մասնավորապես՝

1) գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և հողատեսքերի կտրտվածությունը բացասաբար է ազդում հակակարկտային ցանցերի կիրառման վրա, ինչը պահանջում է համատեղ գործունեության իրականացում, հողերի համատեղ օգտագործում,

2) բնակլիմայական այլ աղետների, մասնավորապես ցրտահարության հետևանքով շահառուների բերքի կորստի հետևանքով վարկերի և տոկոսադրույքի վերադարձման գործընթացի վտանգում,

3) ցանցերի ներդրումը պահանջում է մեծածավալ ներդրումներ, որի փոխհատուցման ժամկետը բավականին երկար է, ուստի ֆինանսական կազմակերպությունների կողմից այս բիզնեսի նկատմամբ շահագրգռվածությունը կարող է թույլ լինել:

39. Հակակարկտային ցանցերի վարկավորման պետական աջակցության ծրագրի իրականացման ռիսկերն են.

1) գյուղատնտեսությունում տնտեսավարողների հակակարկտային ցանցերի համար ցածր վճարունակ պահանջարկը.

2) մատչելի վարկավորման ծրագրի իրականացման համար հակակարկտային ցանցերի ոչ արդյունավետ տարբերակների առաջադրումը.

3) վարկերի սուբսիդավորման ոչ արդյունավետ մեխանիզմների ընտրությունը,

4) վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման համար ակնկալվող միջոցների գերագնահատումը.

5) տարբեր գործոններով պայմանավորված վարկառուների ակնկալվող եկամուտների չապահովումը.

6) ֆինանսական կառույցների կողմից ոչ մատչելի պայմանների առաջադրումը,

7) հակակարկտային ցանցերի ներկրման հնարավոր դժվարությունները և փոխադրման համար չնախատեսված ծախսերը,

8) հակակարկտային ցանցերի նկատմամբ նախատեսվածից ավելի մեծ պահանջարկը:

40. Ռիսկերի մեղմման հնարավորություններն են՝

1) հակակարկտային ցանցերի ներդրման ֆինանսավորման պայմանագրում մատչելի մեխանիզմների առաջադրումը.

2) հակակարկտային ցանցեր արտադրող երկրների և մատակարարող կազմակերպությունների հետ համագործակցությունը և ծագած խնդիրներին օպերատիվ լուծումներ տալը.

3) հակակարկտային ցանցերի Հայաստանի Հանրապետություն ներկրման ծախսերը և ռիսկերը հակակարկտային ցանցերի արտադրողներին վերապահելը.

4) հակակարկտային ցանցերի և դրա մոնտաժման դետալների տեղական արտադրության կազմակերպումը:

VII. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆԸ

41. Հակակարկտային ցանցերի ներդրման պետական աջակցության ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը պետական բյուջեն է և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցները:

42. Հակակարկտային ցանցերի ներդրման պետական աջակցության ծրագրի շրջանակներում սույն ծրագրի պայմաններին համապատասխան խաղողի այգիների հակակարկտային ցանցերի և պտղատու այգիների հակակարկտային ցանցերի ներդրման համար նպատակային վարկավորման հաշվարկները ներկայացված են 1-ին և 2-րդ աղյուսակներում: Կատարված ուսումնասիրություններից ելնելով, հաշվարկների կատարման համար 1 հա խաղողի այգու հակակարկտային ցանցի ձեռք բերման և մոնտաժման ծախսերը ընդունվել է 3.605 մլն դրամ, իսկ պտղատու այգու համար՝ 7.550 մլն դրամ: Կոնկրետ պայմաններից, արտադրող երկրից, ցանցերի որակական հատկանիշներից ելնելով հակակարկտային ցանցերի գինը որոշակիորեն կարող է տատանվել:

43. Կատարված հաշվարկների համաձայն խաղողի այգիների (1000 հա) հակակարկտային ցանցերի ներդրման համար վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը 2018 թվականին կկազմի 404.3 մլն դրամ, իսկ 7 տարիների համար 1,532.1 մլն դրամ:

44. Կատարված հաշվարկների համաձայն պտղատու այգիների (350 հա) հակակարկտային ցանցերի ներդրման համար վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը 2018 թվականին կկազմի 296.3 մլն դրամ, իսկ 7 տարիների համար 1,123.1 մլն դրամ:

45. Ընդհանուր վերցրած այգիների (1350 հա) հակակարկտային ցանցերի ներդրման համար վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը 2018 թվականին կկազմի 700.6 մլն դրամ, իսկ 7 տարիների համար 2,655.2 մլն դրամ:

46. Խաղողի այգիների հակակարկտային ցանցերի գումարը և մոնտաժման ծախսերը կկազմի ընդամենը 3,605.0 մլն դրամ, վարկի սպասարկման հետ միասին՝ 5,392.5 մլն դրամ:

47. Պտղատու այգիների հակակարկտային ցանցերի գումարը և մոնտաժման ծախսերը կկազմի ընդամենը 2,642.5 մլն դրամ, վարկի սպասարկման հետ միասին՝ 3,952.7 մլն դրամ:

VIII. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

48. Ծրագրի իրականացման արդյունքում՝

1) նախադրյալներ կստեղծվեն մատչելի մեխանիզմների կիրառմամբ տարեկան շուրջ 1350 հա խաղողի և պտղատու այգիների հակակարկտային ցանցերի ներդրման համար.

2) հանրապետության այգիների շուրջ 2.4 %-ը կպատվի կարկտապաշտպան ցանցաշեր-տերով.

3) հակակարկտային ցանցեր կիրառած տնտեսավարողների մոտ գրեթե կբացառվի կարկուտի ռիսկը, կբարելավվի բերքի որակը, կավելանա տնտեսավարողների եկամուտները,

4) նախադրյալ կհանդիսանա այլ տնտեսություններում տվյալ տեխնոլոգիայի ներդրման համար,

5) նշված տնտեսությունների համար կբարձրանա ապահովագրության համար գրավչությունը,

6) նախադրյալներ կստեղծվի ընդլայնված ծավալներով ծրագրի իրականացման համար:

Աղյուսակ N 1

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության
ոլորտում հակակարկտային ցանցերի ներդրման համար
տրամադրվող վարկերի տոկոսադրույքների
սուբսիդավորման ծրագրի

ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ, ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

(հազ. դրամ)

NN ը/կ	Այգու անվանումը	Հակակարկտային ցանցերի ներդրման համար պահանջվող ծախսերը 1 հա-ի հաշվով	Հակակարկտային ցանցերի ներդրման այգու տարածքը (հա)	Ընդամենը հակակարկտային ցանցերի ներդրման համար պահանջվող ծախսերը	1 հա-ի հաշվով վարկի սպասարկման ծախսերը (14 % տոկոսադրույքի պայմաններում)	1 հա-ի հաշվով վարկի սպասարկման ծախսերը (2 % տոկոսադրույքի պայմաններում)	Ընդամենը վարկի սպասարկման ծախսերը
1.	Պտղատու այգի	7,550.0	350	2,642,500.0	11,293.5	8,084.8	3,952,739.7
2.	Խաղողի այգի	3,605.0	1000	3,605,000.0	5,392.5	3,860.4	5,392,479.0
Ընդամենը			1350	6,247,500.0			9,345,218.7

Աղյուսակ N 2

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության
ոլորտում հակակարկտային ցանցերի ներդրման համար
տրամադրվող վարկերի տոկոսադրույքների
սուբսիդավորման ծրագրի

ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԻ
ԵՎ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տարիները	Պտղատու այգի				Խաղողի այգի				Պտղատու և խաղողի այգի	
	Վարկի տոկոսագումարի չափը		Սուբսիդավորվող տոկոսագումարի չափը		Վարկի տոկոսագումարի չափը		Սուբսիդավորվող տոկոսագումարի չափը		Վարկի տոկոսագու-մարի չափը 1350 հա-ի հաշվով, մլն դրամ	Սուբսիդավոր-վող տոկոսագումարի չափը 1350 հա-ի հաշվով, մլն դրամ
	1 հա-ի հաշվով, հազ. դրամ	Ընդամենը 350 հա-ի հաշվով, մլն դրամ	1 հա-ի հաշվով, հազ. դրամ	Ընդամենը 350 հա-ի հաշվով, մլն դրամ	1 հա-ի հաշվով, հազ. դրամ	Ընդամենը 1000 հա-ի հաշվով, մլն դրամ	1 հա-ի հաշվով, հազ. դրամ	Ընդամենը շուրջ 1000 հա-ի հաշվով, մլն դրամ		
1-ին տարի	987.8	345.7	846.7	296.3	471.7	471.7	404.3	404.3	817.4	700.6
2-րդ տարի	836.8	292.9	717.3	251.0	399.6	399.6	342.5	342.5	692.4	593.5
3-րդ տարի	685.8	240.0	587.8	205.7	327.5	327.5	280.7	280.7	567.5	486.4
4-րդ տարի	534.8	187.2	458.4	160.4	255.4	255.4	218.9	218.9	442.5	379.3
5-րդ տարի	383.8	134.3	329.0	115.1	183.3	183.3	157.1	157.1	317.6	272.2
6-րդ տարի	232.8	81.5	199.5	69.8	111.2	111.2	95.3	95.3	192.6	165.1
7-րդ տարի	81.8	28.6	70.1	24.5	39.1	39.1	33.5	33.5	67.7	58.0
Ընդամենը	3,743.5	1,310.2	3,208.8	1,123.1	1,787.5	1,787.5	1,532.1	1,532.1	3,097.7	2,655.2